ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գլուխ 22.1 Պատվի, արժանապատվության կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման վարույթը

Հոդված 203.1 Հայցադիմումը վարույթ ընդունելը

1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հոդված 203.2 Պատվի, արժանապատվության կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման վարույթի ժամկետները.

1. Պատվի, արժանապատվության կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման հայցերը առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երկամսյա ժամկետում:
2. Վերաքննիչ դատարանը եզրափակիչ դատական ակտի դեմ ներկայացված բողոքը քննում և որոշում է կայացնում երկամսյա ժամկետում:
3. Վճռաբեկ դատարանը վարույթ ընդունված բողոքը քննում և լուծում է երկամսյա ժամկետում:

Հոդված 203.3 Հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետը:

1. Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում: »